Նոյեմբերի 25-ին Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր բարեգործական հիմնադրամի նախաձեռնությամբ եւ Վրաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակութային կենտրոնում կազմակերպվել էր ոսկրածուծի կամավորների դոնորագրում:

Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում լեյկեմիայով եւ արյան չարորակ հիվանդություններով տառապող հայորդիների կյանքի փրկության առաքելությամբ զբաղվող, հարավկովկասյան տարածաշրջանում միակը հանդիսացող, 1999 թվականին հիմնադրված Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր բարեգործական հիմնադրամի՝ Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչների շրջանում կազմակերպված դոնորագրման գործընթացում ներգրավվել էին Թբիլիսիում գործող հայկական հասարակական կազմակերպություններ, Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմը եւ Վրաստանում ՀՀ դեսպանությունը:

HAYARTUN